403 Մեր Տերը կգա շուտով ամպերով,

1. Մեր Տերը կգա շուտով ամպերով,
Չլինենք հիմար կույսերի նման,
Չլինենք անհոգ, չլինի հանկարծ՝
Մեր Տերը գալիս մեզ գտնի քնած:

Քանի դեռ ուշ չէ, (2)
Ապաշխարեցե՛ք,
Քանի դեռ ուշ չէ, (2)
Տերը ճանաչե՛ք:

2. Լսե՛ք դուք խոսքը Ավետարանի,
Լսե՛ք դուք խոսքը Աստծո բերանի.
Ո՞վ թշվառ մարդիկ, չար գործերն թողե՛ք,
Եկե՛ք Հիսուսին, փրկություն գտեք:

3. Ապաշխարեցե՛ք, Հիսուսին եկե՛ք,
Սրտերդ բացե՛ք ու խոստովանե՛ք:
Դառը զղջումով ներում կստանաք,
Թե չապաշխարեք՝ կորուստ կգնաք:

4. Չէ՞ որ աշխարհից ոչինչ չեք տանի,
Արթնացե՛ք շուտով, չմնաք գերի.
Չարն է գազազել, փրկություն գտե՛ք,
Քանի դեռ Աստծո դռները բաց են: